

5. Յուզակ 52 հայերէն ձեռագիր Աստուածաշունչ մատենաներու, որոնք կը գտնուին Ս. Յակոբեանց Չեռագրատան մէջ: Այս աշխատանքը յանձնուած էր Նշանեանի 1935ին Ս. Գրքի հայերէն քարգմանութեան 1500ամեակի յօրհանական Յանձնախումբի կողմէ. գոր եւ ի գլուխ հանած է մանրակրկիտ նկարագրութեամբ: Յայտնի չէ ինչ պատճառը, քէ այս շատ օգտակար աշխատութիւնը ինչո՞ւ լոյս չէ տեսած նոյն առթիւ եւ կամ այնուհետեւ:

6. Տիգրան Հ. Թ. Սաւալանեանց, Պատմութիւն Երուսաղէմի: Գրաբար բնագրէն աշխարհաբարի վերածեց Մեսրոպ Եպ. Նշանեան: Հատոր Ա. եւ Բ., Երուսաղէմ 1931, 80, էջ 1Բ + 1387: Թարգմանիչը նոյնացուցած է հատորս կցելով անոր բաժին մը Արձանագրութիւններու եւ Տապանաբերութեան Գրախօսական մը հիմուն. Հանդ. Ա.մ.ս. 48 (1934), 92—94:

7. Երուսաղէմ յընթացս զարուց. Քարգմանութիւն. տակաւին անտիպ:

8. Տպարան Առաք. Աթոռոյն Ս. Յակոբեանց. 100ամեայ Յորելեանին առթիւ. Երուսաղէմ 1939 (արտատպուած Ս ի ռ Ն է ն):

9. Հատընտիր Պատմութեան: Թարգմանութիւն: Երուսաղէմ 1932:

Այս տպագիր եւ անտիպ երկասիրութիւններէն առաջին հինգը առաւելապէս կը շարժեն մեր հիացմունքը. անոնց մէջ կը ցցուի Նշանեան իբրեւ խղճամիտ բանասէր եւ յստակամիտ պատմագէտ: Նա միակն է որ ծաղկեցաւ այս ուղղութեամբ Ս. Յակոբեանց Միաբանութեան մէջ: Միտք մը, որ ատակ հանդիսացաւ հրապարակ դնելու այսպիսի հատորներ, կարող էր նա Ս. Յակոբեանց իբր 3700 ձեռագիրներէ աւելի նորութիւններ լոյս ընծայել, եթէ շնորհուած ըլլային իրեն աւելի քաջակերութիւն եւ աւելի ազատ ժամեր:

Յիշատակ արդարոց օրհնութեամբ:

Հ. Ն. Ա.

† ՍՏԵՓԱՆՈՍ ՄԱՆՈՒՍԵԱՆ

Տարույս յունիս 21ի գիշերը վախճանեցաւ Երեւան վաստակաւոր Ստեփանոս Մալխասեան 90ամեայ հասակին:

Հանգուցեալը ծնած է 25 հոկտեմբեր 1857 Ախալցխա: Նախաւոր կրթութիւնն առած ծննդավայրին կարապետեան ծխական Դպրոցին մէջ, 1874ին կը փոխադրուի Էջմիածին շարունակելու իր ուսման ընթացքը նորաբաց Գէորգեան ձեմարանին մէջ: 1881ի վերջերը կը մեկնի Պետերբուրգ հետեւելու իբրեւ ազատ ունկնդիր Համալսարանի հայագիտական դասախօսութիւններու, միաժամանակ պատրաստուելու պետական ֆեմուքեան: 1887ին կ'արձանագրուի Համալսարանի ուսանող եւ կը յաճախէ Հայ-վրական ուսմանց Բաժանմունքի դասախօսութիւններու: Այն տեղ իրեն դասընկեր կ'ունենայ Ն. Մառը: 1889ին ընդունելով հետամուտի (candidat) աստիճան՝ կը վերադառնայ իր ծննդավայրը: Մալխասեան ընտրած էր իր գործունէութեան ասպարէզ մանկավարժութիւնը: Գործեց 30 տարի անընդհատ այս ասպարէզի վրայ (1889—1919) Ախալցխա, Տփղիս (Ներսիսեան վարժարան, Յովնանեան եւ Գայիանեան Դպրոցներ), Էջմիածին (Գէորգեան ձեմարան), Ադեֆանդրապոլ («Հայկ. Համալսարան») եւ դարձեալ Ախալցխա (վարժարան):

Սկսեալ 1920էն առանձնացաւ Ստ. Մալխասեան իր սենեակը եւ նուիրուեցաւ Բացաւորական Բառարանի մը կազմութեան, գոր եւ հանեց ի գլուխ 1944ին չորս լայնատարած հատորներու մէջ եւ արժանացաւ Ստալինեան Մրցանակի պսակին:

1881—1887 տարիներուն, երբ կը գրտնուէր Մալխասեան Պետերբուրգ, ծանօթացաւ Կ. Եգեանցի: Քաջակերուած անկէ միջամուխ եղաւ Հայոց եին գրականութեան ուսումնասիրութեան: Կ. Եգեանցի հետ ձեռն ի ձեռն հանեց հրատարակ, հանելի գրաբարով, հետեւեալ գործերը.

1. Բռնի Միութիւն Հայոց Ահաստանի ընդ Եկեղեցւոյն Հոռոմայ: Ժամանակակից Յիշատակարանը: Պետերբուրգ 1884: Յիշատակարաններս քարգմանուած են լեհերէն բնագրէ. Արարաւ... քարգմանութիւնս այս հայկական ի ձեռն Ս. Մալխասեանց, առաջարկելով մերով եւ վերակացութեամբ ի գրոց լեզու» կը գրէ Կ. Եգեանց Յառաջարանին մէջ:

2. Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական: Պետերբուրգ 1885: Յառաջարանին մէջ խօսելով ի մասին Եգեանցի կը գրէ. «որ ոչ միայն պատուեաց զվեգ յանձնարարութեամբ հրատարակութեանս, եւ բարեյօժար կամօք առաջի արար գՁեռագիր ընտիր համակ եւ զմատենադարանն իւր փարթամ՝ այլ եւ օգտակար խորհրդով իւրովք եւ վերակացութեամբ բազում ինչ ստուար եղեւ լրութեան եւ ձեռն ձեռնարկութեան գործոյս» (էջ ԽԲ—ԽԳ): Գրախօս. ՀԱ 2 (1888) 128:

3. Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց: Պետերբուրգ 1887: Յառաջարանին կցած է Եգեանց տողերս. «Ըստ խնդրոյ մերում կազմեաց գրագիր մերոյս տպագրի Ստ. Մալխասեանց, հանդերձ ցուցամարք տարբեր ընթերցումոցն ի ստորոտ իւրաքանչիւր իջից»: Հմմտ. Հանդ. Ամս. 1888, էջ 128:

Գեղեցիկ եռանդով սկիզբ առած այս գործունէութիւնը ընդհատուի կրեց երբ նուիրուեցաւ նա ուսուցչական ասպարէզին: Բայց Մալխասեան շարունակեց հետաքրքրուիլ գրական խնդիրներով եւ ժամանակ մանաւանդ լսելի ընել նաեւ իր ձայնը, երբ ժամանակ գրական հարցեր հրատարակ կը դրուէին: Մալխասեան կ'արտայայտուէր ընդհանրապէս Մշակ օրաթերքին մէջ: Յաջորդ ցանկիս մէջ պիտի յիշենք իր գրքի այն յօդուածները միայն, որոնք գրական արժէք կը ներկայացնեն:

Գարուս սկիզբը գրական Յանձնաժողով մը կազմուեցաւ Հայ Պատմագիրներու ֆեմական հրատարակութիւն մը ձեռնարկելու: Այս ձեռնարկութեան վերին Հոգաբարձութիւնը յանձնուեցաւ Ստ. Մալխասեանի, որ եւ յանձն առաւ առաջին Գիրքը պատրաստել աշխատակցութեամբ Գ. Տէր-Մկրտչեանի:

4. Ղազար փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ Թուրք առ վահան Մամիկոնեան: Տփղիս 1904: Հմմտ. Հանդ. Ամս. 1904: Յաջորդ հատորներն եղան Ազաթանդէշոս (1909) եւ Մ. Պորենացի (1913):

5. Սեբէոս եպիսկոպոսի Պատմութիւն քաղաքատեմաբ ձեռագրաց հանդերձ առաջարանիւ եւ ծանօթութեամբ: Երեւան 1939:

6. Նայր ուսերէնի քարգմանած. История епископа Себеоса. Перевен с чет-

вертого исправленного армянского издания Ст. Малкасянц. Ереван 1939, 80, էջ 184.

7. Ամիրտովլաթ Ամասիացւոյ Օգուստ րժշկութեան: Երեւան 1940:

8. Մովսէս Պորենացի. Հայոց Պատմութիւն. Թարգմանութիւն, ներածութիւն եւ ծանօթութիւններ: Երեւան 1940, 80, էջ 1Գ + 368:

9. Փաւստեայ Բիւզանդեայ Պատմութիւն Հայոց. Թարգմանութիւն: Կ'ըստի, քէ պատրաստած էր տպագրութեան. բայց անտիպ մնացած՝ մահուան պատճառաւ:

10. Սեբէոսի Պատմութիւնը եւ Մ. Պորենացի. մատենագրական ուսումնասիրութիւն: Տփղիս 1899, 80, էջ Է + 118:

11. Ուսումնասիրութիւն Փ. Բիւզանդի Պատմութեան: Հանդ. Ա.մ.ս. 1896, էջ 35—43, 81—84, 101—108: Արտատպ. վիճենա 1896, 80, էջ 59:

12. Մի նկատողութիւն Փաւստոսի Պատմութեան մասին: Zeitschrift für armenische Philologie. 1 (1903) 64—66:

13. Ուղղագրութիւններ Ղ. Փարպեցւոյ Պատմութեան եւ Թղթի, ZAP 2 (1904), 226—233:

14. Մովսէս Պորենացւոյ առեղծվածի շուրջը: Երեւան 1940, 80, էջ 156:

15. Մովսէս Պորենացւոյ նոր աղբիւրը: Մուրե 1892, էջ 1852—1863:

16. Նորագոյն կարծիքներ Մ. Պորենացւոյ Պատմութեան մասին. Մշակ 1898, Թ. 102:

17. Մ. Պորենացին քաղկեդոնական էր (Պատասխան Ե. Տէր-Միհայելեանին). Տեպեկագիւր Հայկ. ՍԱՌ. Գիտ. Ակադեմիայի, 1944, Թ. 3—4, էջ 27—54:

18. Ե՞րբ են Հայերն ընդունել քրիստոնէսութիւնը: Էջմիածին 1 (1944), Թ. 1, էջ 22—26:

19. Մի առեղծուած Նարեկի մէջ: «Յուշարձան», վիճենա 1911, էջ 223—224:

20. Հայագիտութիւնը իւր դարի սկզբում: Մուրե 1901, Ա. 157—169. Բ. 192—205. Գ. 128—142. Դ. 101—119. Ե. 161—171:

21. Դասընթաց Հայոց Մատենագրութեան Պատմութեան. Ներսիսեան Հոգեւոր Դպրոցի աշակերտների համար: Կազմած Ստ. Մալխասեանցի դասախօսութիւններից: Երկրորդ՝ բարեփոխուած հրատարակութիւն. Թիֆլիս 1908, 80, էջ 288 (վիճակայ):

Առաջին հրատարակութիւնը եղած է 1902 թեկտ.:

22. Ո՞րն է Հայ տպագրութեան ստալին տարին: Մ շ ա կ 1912, Թ. 19, 26, 27, 38, 57: Հմմտ. անդ Թ. 34 Հ. Ն. Ա., Հայ տպագրութեան Ա. տարին 1512 թուականն է:

23. Համառոտ պատմութիւն Ներսիսեան հոգեւոր Դպրոցի 75 ամեայ գոյութեան (1824—1899): Տիփղիս 1900, 8°, էջ 214:

24. Հայերէն բացատրական բառարան, որ պարունակում է 1. Գրաբարի, Միջին հայերէնի, նոր գրական լեզուի եւ բարբառների բառաբերքը: 2. Հին եւ նոր (արեւելեան եւ եւրոպական) փոխառեալ բառերը. 3. Փոխառեալ բառերի ծագումը. 4. Հին եւ նոր ոմարաբանութիւն. 5. Օրինակներ գրական լեզուի եւ մասամբ բարբառների համար. 6. Քերականութեան եւ բանասիրական ցուցումներ. 7. Արտասանութիւն երկդիմի ընթերցում ունեցող բառերի: Չորս հատորում: Կազմեց Ստ. Մալխասեանց, իսկական անգամ հայկական ՍՍՌ գիտութիւնների Ակադեմիայի: Հատոր Ա.—Գ. Երեւան 1944:

25. Գրաբարի հոլովումը, խոնարհումը եւ նախադիրները: Տիփղիս 1891, 8°, էջ 52: Հմմտ. Ամս. 5 (1892), 81—83:

26. Գրաբարի համաձայնութիւնը. Տըփղիս 1892, 8°, էջ 176:

27. Մի քանի խօսք մեր երկու գրական լեզուների մերձեցման մասին: Արարատ 1898, էջ 128—

28. Մի հնչիւնին մի գիր. Արօր 1 (1910), Թ. 1—2:

Կը յիշեմ այս տեղ նաեւ իր թարգմանական գրականութիւնը:

29. Վայրենիների կրօնը. Արարատ 1881, էջ 547—564, 607—614: Ստորագրած՝ «Ստ. Մալխասեան, Գեորգեան ձեմարանի Ա. Լսարանի ուսանող»:

30. Վ. Շէկապերի Լիր թագաւոր. ողբերգութիւն հինգ արարուածով. Տիփղիս 1892, էջ 184:

31. Վ. Շէկապեր, Մակրէթ. ողբերգութիւն հինգ արարուածով. Տիփղիս 1892, 8°, էջ ԺԸ + 108:

32. Գ. Էբերս, Մարդ եմ (Homo sum). Տիփղիս 1898, 8°, էջ 429: Հմմտ. Հանդ. Ամս. 1898, էջ 341:

33. Վ. Լունդելիւզ, Կեանքը ծովերի խորքում. Տիփղիս 1903, 8°, էջ 96:

34. Թարգմանութեան Մաղիկներ. Լուսնայ 1902, Թ. 1, էջ 172—182, Թ. 2, էջ 153—162:

Ստեփանոս Մալխասեան հանդիմանաւ վաստակաւոր դաստիարակ իր 30ամեայ ուսուցչական գործունէութեան մէջ: Հիացմունք կը խլէ մեզմէ իր հոյակապ Բացատրական Բառագիրքը, ի գլուխ ելած անխոնջ աշխատասիրութեամբ յառաջացեալ տարիքի մէջ: Շնորհակալութիւն կը հնձէ նա բանասերներէն այն՝ գիտական պահանջներու համայն լոյս ընծայած պատմագիրներու համար: Իբրեւ քննադատ Նախնեաց երկերու միտեցաւ նա պահպանողական ուղղութեան. իր համոզումներն ի մասին Հայոց «Պատմա-հօր» փայտիցեց ցվերջ յամառօրէն: Նորաձեւ վարդապետութիւն էր «Մի հնչիւնի մի գիր». որ գալթակալութեան առիթ ընծայեց Մ. Արեղեանի: Նորագոյն վարդապետութեան դէմ թէպէտ ըմբոստացաւ ինքնին, բայց ուշ էր արդէն:

Շիրմիդ շատերը քու աշակերտներդ պիտի ունենաս այցելու. հրատարակութիւններուդ երախտագէտ պիտի մնայ յաւէտ Բանասիրութիւնը. Անուամոյ հոյակերտ Յուշարձան կանգնեցիր ինքնին Բառարանդ:

Հ. Ն. Ա.

Ն Ո Ր Հ Ր Ե Տ Ա Ր Ը Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

(Ուղարկուած խմբագրութեան):

Արամասեան Ա., Գերմանացիները երէկ եւ այսօր, օտար կարծիքներ Գերմաններու մասին: Փարիզ, տպ. Turabian 1944, 8°, էջ 44: Գինն՝ 25 Փր.:

Ալեմշահ Գուրգէն Մ., Ինը Մենեք դաշնակէ ընկերակցութեամբ. Տեաք Ա. Չարգազրութիւն Ռ. Շիշմանեանի: Փարիզ, 1947, 40, էջ 18: 19a rue Caumartin, Paris.

Ահարոնեան Ա., Կարօտ Հայրենի, Պոսթըն, տպ. Հայրենիք, 1927, 8°, էջ 88:

— Ժողովածու երկերի. Հատոր Ա. Պատկերներ: Տպ. Հայրենիք, 1947, 80, էջ 391: Գինն՝ 4 Փր.:

Ահարոնեան Ա., Ժողովածու երկերի. Գ. Տար. Իտալիայում. Իտալական էսքիզներ: Անդ, 1946, 80, էջ 425: Գինն՝ 4 Փր.:

Ամպարեան Յովսէփ, Բաց նամակ «Արեւ»ի Պր. Խմբագրատեղին: Գահիրէ 1947, 1° մեծ: Անդրէասեան Անդրանիկ, Կարմիր Ասպատակի օրագրէն Պատմութեան Պատմութեան, տպ. Պայքար, 1947, 80, էջ 281, Գինն՝ 2 Փր.:

Ամպարեան Գրիգոր՝ Առանց քէնի եւ ուրի (Չեռք ձեռքի տանք) Պէյրութ, տպ. Ազատ 1946, 80, էջ 14, Գինն՝ 25 Լ. Ե. Կուրօ փողոց Թ. 129 Beyrouth.

Բարկով Ա. Ս. եւ Պոլովինիկի Ա. Ա., Թիբեթական Աշխարհագրութիւն: Գասա-ճիդիկական Աշխարհագրութիւն: Գասա-ճիդիկական Աշխարհագրութիւն զարգացող Երկրի Երկրագիտական եւ միջնակարգ զարգացող Երկրագիտական համար: Հայ Պետհրատ, Ե. դասարանի համար: Հայ Պետհրատ, Երեւան 1945, 80, էջ 184: Գինն՝ 6 Ռ.:

Բզնունի Լեւոն, Միացող Շուշաններ: Թեհրան, տպ. Մոզէրն, 1943, 80, էջ 82, Գինն՝ 1 Փր.:

Գարսեան Լեւոն, Վայրկեաններ: Պաղտատ, տպ. Նայիրի-Հայկ, 1947, 80, էջ 52: Գինն՝ 8 Շիլին: Stepanian Levon, Babba-ah, 38—200 Baghdad, Irak.

Գարսեան Հ. Արտաշէս, Նիւթեր Երկրագիտական Հայրենիքի համար: Ա. տոսի Հայոց Պատմութեան համար: Ա. Պատմութիւն Երկրագիտական: Գահիրէ, ընդ եւ գերեզմանատուններու: Գահիրէ, տպ. Նուպար, 1943, 80, էջ Ը + 307: Գինն 2.5 Փր., ընտիր թղթի վրայ 5 Փր.:

Գեորգեան Վարդան, Նոր Ծագակազմ, դասակարգ ընթերցանութեան, հանդերձ Բերականութեամբ նախակրթարաններու չորրորդ կարգերու համար: Պուէնոս-Այրէս, տպ. Արմենիա, 1943, 80, էջ 162: Գինն՝ 60 Ը.:

— Նոր Բերականութիւն եւ ընթերցանութիւն արդի արեւմտահայ Աշխարհագրութիւն (Պատկերազարդ) Տարրական հարարի (Պատկերազարդ) համար: Բ. եւ միջին Ա. կարգերու համար: Պուէնոս Այրէս, տպ. Արմենիա, 1942, 80, էջ 100: Գինն՝ 50 սենդ: El Salvador 4643. Buenos Aires, Argentine.

Գույումեան Յակոբ, ձեռագրած սիրտ, Չարուհի Գալէմբարեանի յառաջարկով: Թիւրքիստան, տպ. Efficient Printing Company 1947, 80, էջ 24:

Գրիգորեան Պերն, Հոգեւոր ճամբուն վրայ: Պատկերազարդուած՝ Տիւրքիստանի կողմէ, Էսթեթիկ Գանձի յառաջարկով:

Գրիգորեան Պերն, Նոյնը սպաններէն. Por el Camino de mi Alma. Traducido del Armenio por Esteban Kalaidjian. Պուէնոս Այրէս, տպ. Mayo, 1946, 80, էջ 113 + 128: Գինն՝ 5 Փր.:

Դրուազներ Հայկական Եղեռնէն եւ վերածնունդ. 1915ի ջարդերու մասին տեղեկագիրներ, Եւրոպական, Ամերիկեան եւ Հայկական աղբիւրներէ, Նահատակ մտաւորականներու եւ վերածնունդ Հայրենիքի գորակարներու նկարներով: Պարիս, տպ. եւ հրատ. Turabian, 1947, 80, էջ 207: Գինն՝ 200 Փր.:

227, Boulevard Raspail, Paris.

Երեւան Արամ, Մի անյայտ ձեռագիր Տաղարան կրօնական, գիտութեան եւ սիրոյ տաղեր: Թէհրան, տպ. Մոզէրն, 1947, 80, էջ 46: Գինն՝ 20 Ռիալ: Armenian School Khiaban el Naderi, Teheran, Iran.

Երեւան Օրացոյց, 1945, Գահիրէ, տպ. Մասնեան 1944 թուղթ 14 մեծ:

— 1946, Գահիրէ, տպ. Նուպար, 1945, թուղթ 13 մեծ: — 1947, Գահիրէ, տպ. Ոսկեատու 1946, թուղթ 14 մեծ:

Երկար Պայծառ, Ասորէա (Թատերախոյն երկար Պայծառ) Աղբիւրներ, տպ. Ա. Էրեք արար, 1947, 80, էջ 76, Գինն՝ Ստեփանեան, 1947, 80, էջ 76, Գինն՝ 30 Ե. Գ.:

6, Rue Tambacopoule, Rouchyd Pacha (Ramleh) Alexandrie, Egypte.

Զաքարեան Զապէլ, Նոր Մանկապարտէզ, փոքրիկ մանուկներու ստալին գիրքը. 2. տպ. բարեփոխեալ եւ սրբագրեալ, զարգացուած բազմաթիւ դրանաւոր պատկերներով, վաւերացեալ երկրագիտական ստեղծանակներով: Գահիրէ, տպ. Նոր Աստղ, 1947, 80, էջ 98, Գինն՝ 25 Ե. Գ.:

[Հրատ. Հայ. Ազգ. Հիմնադրամ մի Մատենաշար Թ. 4]:

Զոյլեմ Միխայէլ, Ռուսիա ինքնաշարժներ: Ունի հիմա: Թրքմ. Սահակ Պայրգեան: Գահիրէ, տպ. Նուպար, 1943, 80, էջ 44. Գահիրէ, տպ. Նուպար, 890, Cairo Գինն՝ 4 Ե. Գ.:

P. O. Box 890, Cairo Գինն՝ 4 Ե. Գ.:

Զօրեան Ստեփան, Մեղքը: Գահիրէ, տպ. Նուպար, 1946, 80, էջ 47, Գինն՝ 5 Ե. Գ. [Մատենաշար «Երեւան» Թ. 2, հրատ. Ս. Գ. Հ. «Երեւան» Երկտ. Միութեան P. O. Box 47, Cairo].

Խօֆիսեան Կ., Կեանքի գաւառը (ինչպէս կ'այրինք Ամերիկայի մէջ): Նիւ Եորք, տպ. Եփրատ 1947, 80, էջ 208. Գինն՝ 2 Փր.:

Yeprad Press, 142 East, 32nd Street New York 16, N. Y., U. S. A. Ընդարձակ Տարգմանք Ս. Փ. Ա. Հիւանդանոցի Իսթանպուլ. 1942 տպ. Տէր Ներսէնեան եւ Որդիք, 80, էջ 280 + 16. Գինն՝ 200 զր.:

— 1943 տպ. Տէր Ներսէնեան եւ Որդիք, 80, էջ 308 + 16: Գինն՝ 250 զր.: